ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՆՆԱ ԿՈԼՅԱՅԻ

ԱԳՐԵՍԻԱՅԻ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿ ՈՒՆԵՑՈՂ 12-14 ՏԱՐԵԿԱՆ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԸՆԿԱԼՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԺԹ.00.05 «Զարգացման և կրթության հոգեբանություն (մանկավարժական, տարիքային, հատուկ)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան 2014

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Մելս Պարգևի Մկրտումյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վլադիմիր Սևանի Կարապետյան

հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ
Էլեոնորա Ալեքսանդրի Զաքարյան

Առաջատար կազմակերպություն՝ Ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կկայանա 2014թ. դեկտեմբերի 9-ին ժամը 12^{00}-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանին առընթեր գիտական աստիճաններ շնորհող ԲՈՀ-ի Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014թ. նոյեմբերի 8-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության
064 մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար, հոգեբանական

գիտությունների թեկնածու, դոցենտ **Կ. Ե. Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Վերջին տասնամյակներում համաշխարհային տնտեսական և ռազմա-քաղաքական զարգացումներն առանձնահատուկ ազդեցություն ունեցան հասարակությունների, մարդկանց ապրելակերպի և նրանց գիտակցության, վարքագծի ու արժեհամակարգի վրա: Որպես օրինաչափություն՝ այդ զարգացումների արդյունքում բավականին լուրջ փոփոխություններ են կրում հատկապես երեխաների անձի ամբողջականության պահպանման համակարգերը, երևույթների ճիշտ ընկալման, գնահատման հիմնական կողմերը:

Բազմաթիվ հեղինակների աշխատություններում (Մ. Մկրտումյան 2008թ., Դ. Մայերս 2001թ., Ա. Բանդուրա 2000թ.) արտացոլվում է այն գաղափարը, որ սոցիալ-տնտեսական, ընտանեկան ճգնաժամային պայմաններում ապրող դեռահասը, չունենալով սոցիալ-հոգեբանական հմտություններ և կյանքի անհրաժեշտ փորձ, առանձին լարվածությամբ է տանում գոյություն ունեցող դժվարությունների ծանրությունը:

Սոցիալական տագնապի միջավայրը հաճախ նպաստավոր պայմաններ է ստեղծում դեռահասների ինչպես ընդհանուր առողջության, այնպես էլ ասոցիալ վարքագծի ձևավորման համար: Որպես օրինաչափություն՝ այս տարիքում դրսևորվող հոգեկան երևույթներն առանձնանում են բուռն ընթացքով, դրսևորումների փոփոխական բնութագրերով:

Բացի այդ՝ կենսագործունեության անբարենպաստ պայմանները, սոցիալ-հոգեբանական լարվածությունը, բազմաթիվ անհարմարություններն ու դեֆիցիտները ուղղակիորեն անդրադառնում են դեռահասների հոգեկանի զարգացման վրա: Դեռահասների վարքագծում դիտվում են հոռետեսական, ագրեսիվ, ֆրուստրացված դրսևորումներ:

Դեռահասների ագրեսիվ վարքագիծը պայմանավորված է բազմաթիվ գործոններով, որոնց անդրադարձել են հայրենական և արտասահմանյան բազմաթիվ գիտնականներ՝ Վ. Ս. Կարապետյանը (2010թ.), Է. Էրիկսոնը (1963թ.), Դ. Մունը (1976թ.), Գ. Կապլանը (1975թ.), Լ. Ֆիլոնովը (1979թ.), Ի. Կոնը (1980թ.), Դ. Ֆելդշտեյնը (1997 թ.), Ա. Բանդուրան (2000թ.), Դ. Մայերսը (2001թ.): Մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ ագրեսիվության հետևանքով փոփոխություն են կրում դեռահասների ճանաչողական գործընթացները, հուզական ոլորտը, դրդապատճառների համակարգը, դրանց արդյունքում՝ ընկալումների ու պատկերացումների բովանդակությունը:

Այս հանգամանքը հիմք է հանդիսացել, որ մեր հետազոտությունում որպես ուսումնասիրության հիմնական առարկա ընտրվեն դեռահասների ագրեսիվության դրսևորման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները և նրանց սոցիալական ընկալման յուրահատկությունները:

Ատենախոսության հետազոտական աշխատանքներն իրականացվել են ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող դեռահասների հետ: Բոլոր այն հետազոտությունները, որոնք կատարվել են սույն ատենախոսական աշխատանքից առաջ, մեծամասամբ վերաբերում են բնականոն պայմաններում ապրող ագրեսիվ դեռահասների հոգեբանական հիմնախնդիրների ուսումնասիրմանը: Բնականաբար, դրանք չեն կարող

լիարժեք կերպով արտացոլել դեռահասների ագրեսիայի հիմնախնդրի դեռևս չլուսաբանված կողմերը: Առավել ևս չեն կարող ամբողջությամբ արտացոլել բացասական կենսակերպի պայմաններում ձևավորվող դեռահասների հոգեկան ոլորտի յուրահատուկ փոփոխությունները, սոցիալական ընկալման խորքային մեխանիզմները: Այս առումով հետազոտության արդյունքներն արժեքավոր նյութ են հանդիսանում դեռահասների սոցիալական ընկալման առանձահատկությունների ձևափոխումների, դրանց պատճառների բացահայտման, ծնող-երեխա հարաբերությունների հոգեբանական մեխանիզմների, դրանցում գոյություն ունեցող օրինաչափությունների պարզաբանման, ինչպես նաև շտկողական ու վերականգնողական աշխատանքների լիարժեք կազմակերպման և ճիշտ ռազմավարության իրականացման համար:

Սերունդների առողջ ապրելակերպը, նրանց հոգեհիգիենայի արդյունավետ կազմակերպումը տարիքային հոգեբանության համար կարևորագույն հիմնախնդիրներից է: Ուստի սոցիալական տագնապի և ճգնաժամի պայմաններում դեռահասների ագրեսիվության դրսևորման առանձնահատկությունները և միջավայրում տեղի ունեցող սոցիալական հարաբերությունների ընկալման յուրահատկությունների հիմնահարցի ուսումնասիրությունն ավելի քան արդիական է և կարևոր:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔ ԵՆ հանդիսացել դեռահասների անձի ձևավորման, նրանց բազմակողմանի ուսումնասիրության վերաբերյալ ժամանակակից հոգեբանության տեսական դրույթները, ինչպես նաև հոգեբանական հետազոտությունների առանցքային նշանակություն ունեցող տեսակետները: Աշխատանքում մասնավորապես հիմնվել ենք Վ. Ս. Կարապետյանի, Կ. Լորենցի, Ի. Բերկովիցի, Մ. Միդի, Է. Էրիկսոնի, Լ. Ֆիլոնովի, Ի. Կոնի, Դ. Ֆելդշտեյնի, Ա. Բանդուրայի, Դ. Մայերսի և այլոց ուսումնասիրություններում արտահայտված այն տեսակետների վրա, ըստ որոնց՝ դեռահասների անձի ձևավորման գործում կարևոր պայման են համարվում կայուն հարաբերությունները, սոցիալական միջավայրը, դրանում տեղի ունեցող փոփոխություններն ու արժեհամակարգը: Վերոհիշյալ հեղինակների ուսումնասիրություններում կարևորվում են նաև դեռահասների անձի անհատական առանձնահատկությունների, դրդապատճառային համակարգի, ինքնագնահատականի և այլ գործոններ, որոնք մանրակրկիտ ուսումնասիրությունների արդյունքում օգտագործվել են ատենախոսության տարբեր բաժիններում առաջադրված խնդիրների լուծման ժամանակ:

Մասնագիտական գրականության վերլուծությունը (Վ. Ս. Կարապետյան, Ա.Բանդուրա, Լ. Բերկովից, Դ. Մայերս, Մ. Միդը, Դ. Ի. Ֆելդշտեյնը, Է. Էրիկսոնը և այլոք), ինչպես նաև ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող դեռահասների հետ մեր կողմից իրականացվող գործնական աշխատանքների փորձը հիմք են հանդիսանում ատենախոսական աշխատանքի համար առաջադրել **վարկած,** համաձայն որի՝ դեռահասների ագրեսիան սոցիալական միջավայրի անհամապատասխան ընկալման հետևանք է: Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ դեռահասների ագրեսիայի բարձր մակարդակը պայմանավորված է սոցիալական հմտությունների, շփման ու հաղորդակցման կարողություն-

ների թույլ արտահայտվածությամբ, ինքնագնահատականի անհամապատասխանելիությամբ, որը ծնողական խնամքի, վերահսկողության, անհրաժեշտ հոգատարության բացակայության հետևանք է:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԸ ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող 12-14 տարեկան դեռահասներն են:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող 12-14 տարեկան դեռահասների սոցիալական ընկալման առանձնահատկություններն են:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ Է՝ ուսումնասիրել սոցիալական տագնապի պայմաններում ապրող՝ ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող 12-14 տարեկան դեռահասների սոցիալական ընկալման գործընթացի, ինչպես նաև հոգեբանական շտկողական աշխատանքների ընթացքում դեռահասների ագրեսիվ վարքի փոփոխությունների յուրահատկությունները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ԵՆ.

- Ագրեսիայի հիմնախնդրին առնչվող մասնագիտական գրականության վերլուծություն:
- 12-14 տարեկան դեռահասների ագրեսիայի դրսևորման առանձնահատկությունների, հոգեբանական օրինաչափությունների, ինչպես նաև նրանց վարքագծում դիտարկվող տեղաշարժերի արտահայտվածության բացահայտում:
- 12-14 տարեկան դեռահասների ագրեսիվ և նորմատիվ վարքի դրսևորման բնորոշ առանձնահատկությունների բացահայտում, դրանցում նոր իրողությունների սոցիալ-հոգեբանական օրինաչափությունների վեր հանում և դրանց համեմատական վերլուծություն:
- Փորձարարական հետազոտությունների միջոցով 12-14 տարեկան դեռահասների սոցիալական ընկալման առանձնահատկությունների, դրանց ձևափոխումների հիմքում գոյություն ունեցող պատճառահետևանքային կապերի բացահայտում:
- Դեռահասների ագրեսիվ վարքի կանխարգելման, նրանց անձի ինքնության, լիարժեքության և ինքնագնահատականի բարձրացման նպատակով իրականացվող հոգեշտկողական աշխատանքներում դեռահասների վարքագծի կանոնավորման սոցիալ հոգեբանական պատճառականությունների (դետերմինանտների) բացահայտում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Հետազոտության գործընթացը իրականացվել է ութ պայմանական փուլերով.

- Փաստաթղթերի վերլուծության մեթոդ, դիտման մեթոդ և նախնական ախտորոշիչ հարցազրույց (ուղղորդված զրույց անչափահասի հետ):
- Ագրեսիվության մակարդակի բացահայտման մեթոդ (Լ.Գ.Պոչեբուտի հարցարանը):

- Ագրեսիվության մակարդակի բացահայտման ֆրեյբուրգսկյան հարցարան (որպես նախորդ մեթոդիկայի արդյունքների հաստատում և համակազմի ճիշտ ընտրություն):
- Տ.Լիրիի միջանձնային փոխհարաբերությունների բացահայտման մեթոդիկա:
- Դեռահասների կողմից ծնողների վերաբերյալ ունեցած կարծիքի բացահայտման մեթոդ («ADOR»):
- Անձի հաղորդակցական դիրքորոշումների ախտորոշման մեթոդիկա (Ա. Ն. Իվաշովա, Ե.Վ.Զաիկա):
- Հավակնությունների մակարդակի և ինքնագնահատականի ախտորոշման մեթոդիկա (Տ.Դեմբո, Ս.Յա. Ռուբինշտեյն):
- Վիճակագրական վերլուծության մեթոդիկա (Սպիրմեն):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԸ: Հետազոտության համակազմում ընդգրկվել են 12-14 տարեկան 120 դեռահասներ, որոնք բաժանվել են 2 խմբի: Առաջին խմբում ընդգրկվել են նորմատիվ վարք ունեցող դեռահասները (պայմանական «նորմա» խումբ): II խմբում ընդգրկվել են ագրեսիվության բարձր մակարդակ ունեցող դեռահասները (պայմանական «գերագրեսիվ» խումբ): Խմբերը համալրվել են Լոռու մարզի 4 տարածաշրջաններում ապրող 60-ական դեռահասներով, ընդ որում՝ ամեն խմբում ներառվել են 30 տղաներ և 30 աղջիկներ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ: Հետազոտության սկզբնական փուլում կատարվել է հետազոտվող հիմնախնդրին վերաբերող մասնագիտական գրականության վերլուծություն: Այնուհետև ճշտվել և մշակվել է հետազոտության իրականացման ռազմավարությունը, որի հիման վրա աշխատանքները տարվել են հետևյալ հերթականությամբ և փուլերով:

Դեռահասների անձի, նրանց ընտանիքի, միջավայրի վերաբերյալ փաստաթղթերի վերլուծություն, թեմատիկ զրույց, նպատակային դիտումներ, ինչպես նաև թեստային մեթոդների կիրառում: Այնուհետև հետազոտության հիմնական խնդիրների իրականացման նպատակով ուսումնասիրվել են.

- ագրեսիվության սոցիալ-հոգեբանական պատճառականությունները (դետերմինանտները),
- դեռահասների սոցիալական ընկալման գործընթացում գոյություն ունեցող օրինաչափությունները, դրանց հոգեբանական դրսևորումները,
- ագրեսիվության մակարդակի դրսևորումները,
- դեռահասների միջանձնային փոխհարաբերությունների դրսևորման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները,
- դեռահասների և ծնողների փոխադարձ վերաբերմունքի բնութագրերը:

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ

- 12-14 տարեկան դեռահասները փոխակերպվող հասարակությունում հանդիսանում են տարիքային խոցելի խմբեր:

- 12-14 տարեկան դեռահասների ագրեսիան պայմանավորված է նրանց ծնողների, ուսուցիչների և միջավայրի հետվնասվածքային հոգեվիճակների փոխակերպման հետևանք:
- 12-14 տարեկան դեռահասների սոցիալական ընկալման առանձնահատկությունները պայմանավորված են նրանց ագրեսիվության մակարդակով, անհատական և սոցիալական դիրքորոշումներով, ինքնագնահատականով, ծնողների ոչ համարժեք վերաբերմունքով և միջանձնային հարաբերություններում դեռահասների սոցիալական հմտությունների պակասով:
- Սոցիալական տագնապի պայմաններում ապրող՝ ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող 12-14 տարեկան դեռահասների սոցիալական համարժեք բնութագրերի ձևավորումը հնարավոր է ուղեկցվող հոգեբանական վերահսկողական աշխատանքների ճիշտ ռազմավարության ընտրությամբ և հետևողական գործընթացների կազմակերպման արդյունավետությամբ:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ այն է, որ ստացված արդյունքները կարող են լուսաբանել սոցիալական տագնապի պայմաններում ապրող 12-14 տարեկան դեռահասների անձի ձևավորման, ագրեսիվ վարքի սոցիալ-հոգեբանական պատճառականությունների (դետերմինանտների) և դրանց ազդեցության հետևանքների չմեկնաբանված կողմերը: Տեսական հիմնավորումները կարող են օժանդակել դեռահասների սոցիալական ընկալման, անձի ինքնագնահատականի փոփոխության և վարքագծի ձևափոխումներին վերաբերող ժամանակակից տեսությունների և հիմնավորումների համալրմանը: Հետազոտության արդյունքում ստացված գիտական նոր տվյալներն ու օրինաչափությունները կարող են նպաստել դեռահասների ագրեսիվ վարքի ախտորոշման, սոցիալական ընկալման գործընթացներում գոյություն ունեցող օրինաչափությունների բացահայտման և արժեհամակարգի փոփոխությունների խորքային մեխանիզմների ճանաչմանը: Հետազոտության տեսական դրույթները կարող են հիմք հանդիսանալ սոցիալական տագնապի պայմաններում ապրող երեխաների ու դեռահասների ագրեսիվ վարքի ձևավորման գործընթացների կանխարգելման և հոգեշտկման տեսական հիմնադրույթների ու հայեցակետերի մշակմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ այն է, որ հետազոտության տեսական և գործնական ընդհանրացումների, գիտականորեն կազմակերպված գործնական աշխատանքների հիման վրա վերակառուցվել, վերահմաստավորվել են հոգեբանների և մանկավարժների դաստիարակչական ու վերականգնողական, ինչպես նաև շտկողական աշխատանքների լիարժեքությունը: Մշակվել է հոգեբանական ուղեկցման և վերահսկողական աշխատանքների իրականացման արդյունավետ համակարգ, ինչը հնարավորություն կտա մասնագետներին առավել արդյունավետությամբ իրականացնելու ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող դեռահասների սոցիալականացման և հարմարման գործընթացները:

Մշակված շտկողական համակարգը հնարավորություն կտա ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող 12-14 տարեկան դեռահասների

հետ տարվող աշխատանքներում ապահովելու և համակարգելու նրանց սոցիալական ընկալման գործընթացները, ինչպես նաև կոժանդակի դեռահասների հետ տարվող հոգեբանական վերահսկողական գործընթացների կառուցման ռազմավարական արդյունավետ ծրագրերի մշակմանը:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ: Փորձարարական ճանապարհով բացահայտվել են սոցիալական տագնապի պայմաններում ապրող՝ ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող 12-14 տարեկան դեռահասների սոցիալական ընկալման հոգեբանական առանձնահատկությունները, դրանցում գոյություն ունեցող օրինաչափությունները, դրանց արդյունքում՝ վարքագծի փոփոխության բնորոշ կողմերը: Բացահայտվել են ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող 12-14 տարեկան դեռահասների ագրեսիվության սոցիալ-հոգեբանական դետերմինանտները, դրանց ազդեցության յուրահատկությունները, անցանկալի վարքային դրսևորումների շտկման, կարգավորման նպատակահարմար ուղիներն ու միջոցները:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ և ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆԸ: Հետազոտության փորձաքննությունը կատարվել է Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի հոգեբանության տեսության և պատմության ամբիոնում, Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարանում, Վանաձորի «Օրրան» ԲՀԿ-ի հոգեբանների ակումբում: Հետազոտությունների արդյունքներն արտացոլված են ՀՀ ԲՈՀ-ի կողմից հավատարմագրված գիտական հանդեսներում և հանրապետական գիտաժողովների զեկուցումների ժողովածուներում:

Հետազոտության հավաստիությունը և հիմնավորվածությունն ապահովված է հիմնախնդրի առաջադրման համալիր մոտեցմամբ, հիմնարար տեսամեթոդաբանական դրույթների գիտական հիմնավորումներով, հետազոտության կառուցվածքային բաղադրամասերի գիտականորեն հիմնավորված տրամաբանությամբ, հետազոտության նպատակին ու խնդիրներին համապատասխան մեթոդների կիրառմամբ: Հետազոտության հավաստիությունն արտացոլված է նաև հայրենական ու արտասահմանյան հոգեբանների կարևորագույն գաղափարների գիտական հիմնավորումներով և եզրահանգումներով: Առաջադրված խնդիրների լուծումները ապահովված են մաթեմատիկական վիճակագրության և հոգեբանական հետազոտությունների արդյունավետ մեթոդների համալիրով, իրականացված փորձարարական հետազոտությունների հավաստի արդյունքներով:

Հավաստող գիտափորձի և շտկողական աշխատանքից հետո վերաթեստավորման տվյալները, դրանց միջև գոյություն ունեցող կապերի բացահայտման վիճակագրական տվյալները մշակվել են Սպիրմենի կորելացիոն մեթոդով:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԾԱՎԱԼԸ: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, մեթոդական հանձնարարականներից, ընդհանուր եզրակացություններից, օգտագործ-

ված գրականության ցանկից և հավելվածներից: Ընդհանուր ծավալը կազմում է 142 էջ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածական մասում հիմնավորված է թեմայի արդիականությունը, առաջադրված է հետազոտության գիտական վարկածը, ձևակերպված են հիմնական նպատակը, խնդիրները, գիտական աշխատանքի տեսամեթոդաբանական հիմնավորումներն ու հետազոտության մեթոդները: Առաջադրված են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ներկայացված են նաև հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը, ինչպես նաև աշխատանքի գիտական նորույթը:

Ատենախոսության առաջին՝ **«Դեռահասների սոցիալական ընկալման և ագրեսիվ վարքի հոգեբանական առանձնահատկությունները»** գլխում ներկայացված է «Սոցիալական պերցեպցիա»-ի հիմնախնդրի տեսական վերլուծությունը, որտեղ հիմնարար վերլուծությունների միջոցով անդրադարձ է կատարվել հիմնախնդրին վերաբերող գիտական տարբեր դպրոցների, գիտնականների տեսությունների մեկնաբանմանը, սոցիալական ընկալման հիմնական գործառույթներին, միջանձնային փոխհարաբերություններում երևույթների ընկալման մեխանիզմներին **(ռեֆլեքսիա, իդենտիֆիկացիա, էմպատիա, ատրակցիա, ստերեոտիպիզացի, կաուզալ ատրիբուցիա),** միջանձնային ըմբռնման էֆեկտներին **(«լուսապսակի» էֆեկտ, «պրոյեկցիայի» էֆեկտ, «միջին սխալի» էֆեկտ, «տրամաբանական սխալի» էֆեկտ)** և այլ հոգեկան երևույթների գիտական մեկնաբանումներին:

Ատենախոսության առաջին գլխի երկրորդ՝ **«Ագրեսիայի վերաբերյալ գոյություն ունեցող տեսական մոտեցումները, համեմատական վերլուծություն»** ենթագլխում վերլուծվել են մասնագիտական գրականության մեջ ագրեսիայի վերաբերյալ գոյություն ունեցող տեսական մոտեցումները, ինչպես նաև կատարվել են դրանց համեմատական վերլուծությունները: Հոգեբանական գրականության վերլուծությունների փորձը ցույց է տալիս, որ ագրեսիայի վերաբերյալ միանշանակ ընդհանուր և վերջնական մեկնաբանումների տեսակետներ չկան: Բազմաթիվ ուսումնասիրողների կողմից առաջարկվել են ագրեսիայի տարաբնույթ սահմանումներ, որոնք կարելի է խմբավորել 5 հիմական մոտեցումների մեջ՝ էթոլոգիական (Կ. Լորենց), ֆրուստրացիոնալ (Լ. Բերկովիչ, Ս. Ռոզենցվեյգ), կոգնիտիվիստական (Դ. Զիլման), գործունեական (Ա. Ն. Լեոնտև) և բիհեյվորիստական (Ա. Բանդուրա), որոնց քննարկումներն ու մասնագիտական վերլուծությունները մանրամասնորեն ներկայացրել ենք աշխատանքի այդ բաժնում:

Հաջորդ ենթագլուխը նվիրված է դեռահասության տարիքում ագրեսիայի դրսևորման առանձնահատկություններին: Հարկ է նշել, որ հիմնախնդրի ուսումնասիրությունը տարբեր հեղինակների կողմից դիտարկվել է տարբեր տեսանկյուններով, որտեղ յուրաքանչյուր հեղինակ

շեշտը դրել է որևէ կոնկրետ չափանիշի վրա: Մասնավորապես՝ է.Էրիկսոնը ագրեսիվությունը կապում է դեռահասի բացասական ինքնության դերի գիտակցման հետ, որում վերջինս ապաստան է գտնում հարմարման դժվարություններից: Դ. Մունը կարծում է, որ դեռահասների ինքնահարգանքի անգիտակցաբար իջեցված ցածր մակարդակը առաջ է բերում հարմարման որոշակի դժվարություններ: Գ. Կապլանը և ուրիշներ դեռահասների ագրեսիվությունը մեկնաբանում են ինքնավերահսկողության, անձի դիրքի և ինքնահարգանքի մակարդակի հասկացությունների պրիզմայով: Հեղինակների համոզմամբ՝ դրանց խախտումները իրենց հերթին առաջացնում են վարքագծի ագրեսիվ դրսևորման տարբերակներ: Այսպիսի հայացքները կիսում էր նաև Ի. Ս. Կոնը, ում կարծիքով՝ «Ինքնաստորացման զգացողությունն ընտրության առաջ է կանգնեցնում կամ հօգուտ տաժանակիր փորձառությունների, կամ էլ հօգուտ վարքագծի մեջ ինքնահարգանքի բարձրացման, որը միևնույն ժամանակ ուղղված է նաև այդ պահանջմունքների դեմ. որպես կանոն ընտրվում է երկրորդը»: Դեռահասների մոտ հարմարման պատճառով առաջացած ագրեսիվության հոգեբանական մեխանիզմները ներկայացված են Լ. Բ. Ֆիլոնովի աշխատանքում: Ուսումնասիրելով դեռահասների վարքագիծն ու ագրեսիայի սահմանները՝ Լ. Բ. Ֆիլոնովն իր ժամանակին բացահայտել է դրանց դրսևորումների արդյունավետ բնութագիրը: Կիրառական հոգեբանության մեջ թույլատրելիի սահմանների որոնումը համարվում է օրինաչափ երևույթ: Հեղինակի համոզմամբ՝ այն ռացիոնալ է այն դեպքում, եթե դուրս չի գալիս հասարակության կողմից ընդունված նորմերի սահմաններից: Ա. Բանդուրան դեռահասների ագրեսիվության մեջ առաջին հերթին կարևորում է ընտանիքի դերը՝ նշելով, որ ծնողների կողմից հաճախակի պատժված երեխաները շրջապատի նկատմամբ սովորաբար ցուցադրում են ագրեսիայի տարբեր ձևեր: Ինչպես նշում է Դ. Մայերսը (2002)՝ «իմաստավորելով շրջապատը և իրեն, դեռահասը ընդդիմանում է մեծահասակներին, նրանց նկատողություններին: Դեռահասը «ծարավ է» ոչ թե պարզապես ուշադրության, այլ մեծահասկների կողմից ճիշտ ընկալման և վստահության»: Նա ձգտում է որոշակի սոցիալական դեր ունենալ ոչ միայն հասակակիցների, այլև մեծահասակների շրջապատում: Սակայն մեծահասակների շրջապատում առանձին դեպքերում դիտարկվում է դեռահասի սոցիալական ակտիվության զարգացմանը խոչընդոտող չհիմնավորված թյուրըմբռնման դիրքորոշում՝ նա երեխա է և պիտի ենթարկվի: Արդյունքում մեծահասակների և դեռահասների միջև աճում է հոգեբանական արգելք, որը ձգտելով հաղթահարել՝ դեռահասը դիմում է ագրեսիվ վարքի:

Այսպիսով՝ ժամանակակից գիտական գրականության տվյալների վերլուծության արդյունքները համոզում են, որ ագրեսիվ դեռահասները սովորական երեխաներ են, իսկ ագրեսիվության գծերն ու որակները նրանք ձեռք են բերում սխալների ազդեցության ներքո, որոնք կարող են լինել դաստիարակչական աշխատանքներում բացթողումների, միջավայրում ունեցած բարդությունների հետևանքով:

«Դեռահասների միջանձնային փոխհարաբերություններում դրսևորվող սոցիալական ընկալման հիմնախնդիրը»: Առաջին գլխի

չորրորդ ենթագլխում վերլուծության են ենթարկվել իրենց նշանակությամբ երկու տարբեր, սակայն դեռահասների հիմնախնդրին վերաբերող շատ կարևոր փոխհարաբերությունների համակարգեր՝

- մեծահասակների հետ,
- հասակակիցների հետ

Իրականացնելով բնույթով միևնույն ընդհանուր սոցիալակացնող գործառույթը՝ փոխհարաբերությունների այդ երկու համակարգերը իրենց բովանդակությամբ և կարգավորող նորմերով հաճախ կարող են միմյանց հակադրվել, ինչին անդրադառնում ենք մեր քննարկումներում:

Միևնույն գլխի հինգերորդ ենթակետը՝ **«Դեռահասի անձի ինքնագնահատականի հիմնախնդրի դրվածքը ժամանակակից հոգեբանության մեջ»,** նվիրված է դեռահասի ինքնագնահատականի հիմնախնդրի մեթոդաբանական կողմերի վերլուծությանը, որն արտացոլված է Ս. Լ. Ռուբինշտեյնի, Ա. Վ. Զախարովայի, Վ. Ա. Սիսենկոյի, Բլեզ Պասկալի, Ա. Ա. Ռեանի հիմնարար աշխատություններում: Մասնագիտական գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ գոյություն ունեն նաև հետազոտություններ, որտեղ ուսումնասիրվում է դեռահասի ինքնագնահատականի փոխադարձ կապը սեռի, կարգավիճակի և ուսման մեջ ունեցած հաջողությունների հետ: Այսպես՝ Յա. Լ. Կոլոմինսկու կողմից բացահայտվել են դեռահասի ինքնագնահատականի և նրա սոցիալ-հոգեբանական կարգավիճակի փոխկապակցվածության ներքին կապերի մեխանիզմները:

Ատենախոսության երկրորդ՝ **«Ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող 12-14 տարեկան դեռահասների սոցիալական ընկալման առանձնահատկությունների փորձարարական ուսումնասիրությունը»,** գլուխը նվիրված է մեր կողմից իրականացված փորձարարական հետազոտության վերլուծությանը: Քննարկվում են հետազոտության խնդիրները, ընտրակազմը, մեթոդական ապարատը, հետազոտության կազմակերպման պայմաններն ու իրականացման փուլերը: Դրանց վերաբերյալ արվել են հոգեբանական հիմնարար մեկնաբանումներ, հիմնավորումներ և վերլուծություններ, որոնք ներկայացվում են աշխատանքում:

Առաջնորդվելով աշխատանքի տեսական վերլուծության հիմնադրույթներով և մեր կողմից առաջ քաշված վարկածի, առաջադրված նպատակի ու խնդիրների լուծման պահանջներով՝ իրականացվել են հիմնական հետազոտությունները, որոնք ուղղված են եղել պարզելու դեռահասների ագրեսիայի բարձր մակարդակի կապը միջանձնային հարաբերություններում ունեցած խնդիրների, անհամապատասխան ինքնագնահատականի, դիրքորոշումների և ծնողների հետ ունեցած հարաբերությունների հետ:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը հնարավորություն է տվել բացահայտելու նաև մի շարք հետաքրքիր օրինաչափություններ: Մասնավորապես Տ. Լիրիի միջանձնային հարաբերությունների ախտորոշման մեթոդիկայի կիրառման արդյունքում բացահայտվել է ագրեսիվ դեռահասների վարքային հակադիր դրսևորումների միաժամանակյա արտահայտվածություն՝ եսասիրության ու ալտրուիզմի, ավտորիտարիզմի

ու ենթարկվողականության, կասկածամտության ու կախվածության դրսևորումներով: Արդյունքների այսպիսի արտահայտվածությունը վկայում է դեռահասների ներքին կոնֆլիկտայնության, սեփական ես-ի ու նրանց հակադիր պատկերացումների համաժամանակյա արտահայտվածության մասին:

(գծապատկեր թիվ 1)



Նշված հատկանիշների և ագրեսիայի միջև եղած կապը բացահայտվել է Սպիրմենի կորելացիոն վերլուծության միջոցով, համաձայն որի՝ ագրեսիայի բարձր մակարդակի և «կեղծ» ալտրուիզմի, ինչպես նաև կասկածամտության միջև կապ գոյություն ունի:

աղյուսակ թիվ 1

ագրեսիվության բարձր մակարդակ	
կասկածամտություն	$r_s = 0.727$
«կեղծ» ալտրուիզմ	$r_s = 0.645$
կախվածություն	$r_s = 0.375$

Հետազոտության արդյունքների վերլուծությունն ու վիճակագրական տվյալների ամփոփումը հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ ագրեսիայի բարձր մակարդակը ուղիղ համեմատական է դեռահասների ոչ համարժեք սոցիալական ընկալման հնարավորություններին, համաձայն որի՝ ինչքան մեծ է դեռահասների ագրեսիայի մակարդակը, այնքան ցածր է նրանց կողմից իրականության օբյեկտիվ ընկալման և գնահատման կարողությունը, միջավայրի հարաբերությունների նկատմամբ հանդուրժողականությունը:

Այնուհետև ոչ ադեկվատ ինքնագնահատականի և ագրեսիայի կապի բացահայտման նպատակով կիրառել ենք Տ. Դեմբոյի, Ս. Յա. Ռուբինշտեյնի հավակնությունների մակարդակի և ինքնագնահատականի ախտորոշման մեթոդիկան: Այն հնարավորություն է տալիս պարզելու, թե ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող դեռահասների մոտ

ինքնագնահատականի հատկապես ո՛ր գործոններն են ոչ ադեկվատ, թե ինչպիսին է նրանց հավակնությունների մակարդակը ի տարբերություն «նորմա» խմբի դեռահասների: Այսպես՝ ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող դեռահասների խմբում նկատվում է ցածր ինքնագնահատականի միտում գրեթե բոլոր սանդղակների ցուցանիշներում հատկապես հեղինակության և ինքնավստահության սանդղակներում՝ բացառությամբ հմուտ ձեռքերը և բնավորությունը:

Հետազոտվողների խմբերում բնավորությունը գնահատվելով միջին և նույնիսկ բարձր մակարդակում՝ մատնանշում է այն հանգամանքը, որ ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող դեռահաները օբյեկտիվորեն չեն կարողանում զգալ և գնահատել իրենց ագրեսիվության նկարագրերը: Նրանց կարծիքով՝ դա նույնիսկ վարքի լավագույն տարբերակն է: Ինչ վերաբերում է հմուտ ձեռքերին, համոզված ենք, որ դա պայմանավորված է կազմակերպություններում գործող հատուկ խմբակներում տարվող աշխատանքներով:

Հետաքրքրական է այն հանգամանքը, որ ագրեսիվ դեռահասների մոտ ցածր ինքնագնահատականը զուգորդվում է հավակնությունների բարձր մակարդակի հետ, որն ինքնին հանդիսանում է ներքին կոնֆլիկտայնության արդյունք: Հավակնությունների բարձր մակարդակ է նկատվում «նորմա» խմբի դեռահասների ցուցանիշներում, միայն թե այստեղ այն չի ուղեկցվում ցածր ինքնագնահատականով:

Հատուկ քննարկման են արժանի անձի հաղորդակցական դիրքորոշման ախտորոշման մեթոդիկայի կիրառման արդյունքում ստացված հետազոտության տվյալները: Ելնելով ինքնագնահատականի ախտորոշման մեթոդիկայի արդյունքներից, ըստ որի՝ ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող դեռահասները չեն կարողանում օբյեկտիվորեն գնահատել իրենց, նպատակահարմար գտանք հետազոտության առաջին փուլում հարցարանը լրացնել հոգեբանների, ծնողների և ուսուցիչների հետ: Այն հարցին, թե նշված 12 տարբերակներից ո՛րն է ավելի մոտ բնութագրում հետազոտվողներին, ագրեսիվ տղա դեռահասների 35%-ը հայտնվեց «Երեխա-ներդաշակ» սանդղակում. նրանք բնութագրվում են հետևյալ կերպ. որպես կանոն՝ յուրահատուկ են, սրամիտ, «խաբեություն» են անում ի նպաստ իրենց հետաքրքրությունների, կարողանում են ձևացնել և «երևակայել»:

Գերագրեսիվ աղջիկ դեռահասների 48%-ը բնութագրվում է որպես «Մեծահասակ-սահմանափակված», իսկ 45%-ը՝ «Մեծահասակ-կոնֆլիկ-տային»:

Հետազոտության երկրորդ փուլում հարցարանը լրացվեց դեռա-հասների հետ, որտեղ արտացոլվեցին հետևյալ արդյունքները. աղջիկների 93%-ի մոտ առկա է «Ծնող-ձևական» միտումը, ինչը փաստում է այն մասին, որ դեռահասն իր հետ կառուցվող հարաբերություններում պահանջում է պատասխանատու վարքագիծ և էթիկայի կանոնների ու նորմերի խիստ պահպանում: Հաճախ դժգոհություն է արտահայտում ուրիշների վարքագծի նկատմամբ:

Երկու մակարդակներում էլ գտնվող տղաների համար ցանկալի դիրք է համարվում «Ծնող-կոնֆլիկտային» դիրքը, որին բնորոշ են հետևյալ

հատկանիշները. հարաբերություններում համառորեն փնտրում է թերություններ, կտրականապես պահանջում է ենթարկվել իրեն, հաճախ պարտադրում է իր հեղինակությունը, չի հանդուրժում հակադրություններ:

Խոսելով դեռահասի ագրեսիվության և սոցիալական ընկալման գործընթացների մասին՝ հարկ է նշել ընտանիքի առաջնային դերը: Դեռահասը մեծանում է ընտանիքում, ուստի այն հանդիսանում է երեխայի սոցիալիզացման առաջին հիմնական օղակը, կյանքի օրենքների ճանաչման ամենաստույգ աղբյուրը: Հաշվի առնելով վերը նշվածը՝ կիրառել ենք նաև ծնողների վերաբերյալ դեռահասների կարծիքը պարզաբանող մեթոդիկան («ADOR»):

Արդյունքների վերլուծությունը ցույց է տվել, որ ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող դեռահասները իրենց ծնողների վերաբերմունքը գնահատում են դիրեկտիվ, թշնամական: Արդյունքների վերլուծությունում դիտարկվում են նաև սեռային տարբերություններ: Իրենց մայրերին գնահատելիս ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող տղաների ցուցանիշներում գերակշռում է թշնամանքն ու ավտորիտարությունը:

(գծապատկեր թիվ 2)



Թիվ 2 գծապատկերի արդյունքների վերլուծությունները ցույց են տալիս որոշ օրինաչափությունների առկայություն: Այսպես՝

- Տղաների նկատմամբ մոր թշնամությունն արտահայտվում է միջանձնային փոխհարաբերություններում մոր կողմից դրսևորված ագրեսիվության և չափազանց խստության մեջ: Մայրերի համար տղաներն ընկալվում են որպես մրցակից, որին անհրաժեշտ է ճնշել՝ սեփական կարևորությունը հաստատելու համար:
- Հետազոտության ավտորիտարության սանդղակը ցույց է տալիս, որ որդիների հետ իրենց փոխհարաբերություններում մայրերի ինքնուրույնությունն ընկալվում է որպես իշխանության միանշանակ թելադրանք: Դիտարկվում է նաև այնպիսի միտում, որ մայրերը երեխաներին չեն ընկալում որպես ինքնուրույն անձ, որն ունի իր սեփական մտքերը, զգացմունքները, պատկերացումները: Մայրերը ներկայանում են որպես «կույր» իշխանություն, ուժ, որին բոլորը պետք է ենթարկվեն:

Հայրերի նկատմամբ ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող տղաների գնահատականի ցուցանիշների քննարկումները ցույց են տալիս, որ այստեղ ևս գերակշռում է *ավտորիտարության սանդղակը*:

(գծապատկեր թիվ 3)



Փոխհարաբերությունները հիմնվում են ուժի և դաժանության վրա: Հայրերին չեն հետաքրքրում որդիների նախասիրությունները, ծանոթների շրջանակը, առաջադիմությունը դպրոցում: Հաճախ ըստ նրանց որդին պետք է ամեն ինչ ինքնուրույն իմանա:

Աղջիկների գնահատականը մոր նկատմամբ ցուցանիշներում գերակշռում են դիրեկտիվության, ավտորիտարության սանդղակները:

(գծապատկեր թիվ 4)



Իրենց մայրերին գնահատելով *դիրեկտիվ*՝ աղջիկ դեռահասներն ի նկատի ունեն խիստ և դաժան հսկողությունն իրենց հանդեպ: Այդպիսի մայրերը գերադասում են խիստ պատիժը՝ համոզված լինելով, որ իրենք միշտ ճիշտ են, իսկ աղջիկները դեռ փոքր են, անպատրաստ խնդիրներ քննարկելու համար:

Ավտորիտարության սանդղակի ցուցանիշներում մայրերը գրեթե հոգ չեն տանում երեխաների նկատմամբ, չեն զբաղվում նրանց դաստիարակությամբ, չեն կիսում նրանց զգացմունքները և ապրումները: Այսպիսի հարաբերություններում գերակշռում է օտարացումը:

Հայրերի նկատմամբ աղջիկ դեռահասների գնահատականներում գերակշռում են ավտորիտարության և թշնամանքի սանդղակները:

(գծապատկեր թիվ 5)



Հոր վերաբերմունքը գնահատելով թշնամական՝ աղջիկ դեռահասների մոտ նկատվում է հարաբերությունների կառուցման այնպիսի ոճ, որը տանում է հայրերի և դուստրերի միջև հուզական կապերի խախտման, ինչն էլ իր հերթին հանգեցնում է լարվածության աճի և դեռահասի հոգեկան վիճակի ու վարքագծի անկայունության: Հայրերին գնահատելով ավտոնոմ՝ դեռահաս աղջիկները նրանց ընդունում են որպես մարդու, ում հետ հնարավոր չէ համագործակցել կամ բանակցել՝ համարելով, որ նա մեկուսացած է ընտանիքի խնդիրներից: Համոզված են նաև նրանում, որ իրենց հորը չի հետաքրքրում, թե ինչ է կատարվում ընտանիքում: Հաճախ նրա գործողությունները հակասում են ընտանիքի կարիքներին և պահանջներին:

Ամփոփելով հետազոտության արդյունքների վերլուծությունը՝ համոզված կարող ենք եզրակացնել, որ ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող դեռահասների և ծնողների փոխհարաբերություններում դիտարկվում է հոգեբանական անջրպետ, որն իր հերթին արգելում է մտերմիկ, հուզական կապերի զարգացումը, ինչը հանգեցնում է փոխադարձ անվստահության, դեռահասների հիմնախնդիրներին ծնողների անտեղյակության, դեռահասների օտարացման:

Ագրեսիվությունը դեռահասների կողմից հանդիսանում է որպես պաշտպանական ռեակցիա սեփական անձը հաստատելու, իրավունքներն ու ազատությունը ընդգծելու համար:

Ուստի, ելնելով հետազոտության արդյունքներից, հարկ ենք համարում ընդգծել, որ ագրեսիայի մակարդակն իջեցնելու, հնարավորինս նվազեցնելու համար ծնողները պետք է վերանայեն իրենց վերաբերմունքը երեխաների նկատմամբ, կիրառվող ազդեցության ձևերը, քանի որ ագրեսիան ավելի հեշտ է կանխարգելել, քան շտկել:

Հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող դեռահասների անձնային որակների հենքային բաղադրամասերի ձևավորման գործընթացը, որպես

օրինաչափություն, վտանգված է: Ելնելով դեռահասների մոտ դիտարկվող բացասական երևույթների արտահայտվածության վտանգավոր միտումներից, միջանձնային հարաբերություններում դրսևորվող հակասական որակներից՝ հարկ ենք համարել շեշտադրել շտկողական աշխատանքների կազմակերպման անհրաժեշտությունը, որին և անդրադարձել ենք աշխատանքի երրորդ՝ **«Դեռահասների ագրեսիվ վարքի կանխարգելման և հաղթահարման ուղիները»** գլխում:

12-14 տարեկան դեռահասների ագրեսիվ վարքի կանխարգելման ու վերականգնողական աշխատանքների արդյունավետ իրականացման համար մշակվել և առաջադրվել են համապատասխան հանձնարարականներ և մեթոդական ցուցումներ:

Կիրառված հոգեվերականգնողական համակարգը նպատակահարմար է և արդյունավետ՝ ագրեսիվության բարձր մակարդակ ունեցող դեռահասների վարքի կարգավորման և ճիշտ ինքնագնահատականի ձևավորման համար: Այն հնարավորություն է տալիս դեռահասներին օբյեկտիվորեն ընկալելու փոխհարաբերությունները, գոյություն ունեցող իրական կյանքի պատկերը: Տեսական և փորձարարական հետազոտության արդյունքների հոգեբանական վերլուծությունը, դրանց քննարկումը և ընդհանրացումը հնարավորություն են ընձեռում կատարելու հետևյալ **եզրակացությունները.**

- 12-14 տարեկանը հանդիսանում է դեռահասության տարիքի առանձնահատուկ անցումային փուլ, որին բնորոշ են անձի ներքին կառույցների գործառութային արտաքնայնացումը, ցուցադրականությունը, ակտիվ սոցիալականացման ձգտումը, որտեղ միջնորդավորված ձևով արտացոլվում է սեփական անձի նկատմամբ ընդգծված բարձր կամ ցածր գնահատականը:
- Ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող 12-14 տարեկան դեռահասները միջանձնային հարաբերություններում դրսևորում են անձի հակասական որակներ, որն արտահայտվում է եսասիրության ու ալտրուիզմի, ավտորիտարիզմի ու ենթարկվողականության, կասկածամտության ու կախվածության ձևերով: Հակասական այս որակները, զուգորդվելով ցածր ինքնագնահատականի, բարձր հավակնությունների մակարդակի, սոցիալական հմտությունների պակասի հետ, ստիպում են դեռահասներին ագրեսիվությամբ հակազդել շրջապատող միջավայրի ազդակներին:
- 12-14 տարեկան դեռահասների ագրեսիվության բարձր մակարդակն ու սոցիալական ընկալման անհամապատասխանելիությունը պայմանավորված են ծնող-երեխա հարաբերությունների խաթարմամբ, մայրական անհրաժեշտ ջերմության պակասով կամ բացակայությամբ: Դրանց բացակայությունը՝ որպես պաշտպանողական ռեակցիա, դեռահասների շրջանում փոխարինվում է անձի ինքնահաստատմանն ուղղված անձնային հատկանիշների սրվածությամբ, մաքսիմալիզմով, որն էլ հանգեցնում է փոխզիջման, ալտրուիզմի, հարգանքի և այլ հատկանիշներից ու արժեքներից օտարացման:
- Ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող 12-14 տարեկան դեռահասների շրջանում սոցիալական ընկալման սեռային գործոնը

նշանակալի կերպով արտահայտված չէ: Ինչպես ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող տղաների, այնպես էլ ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող աղջիկների շրջանում կոնֆլիկտների բարձր մակարդակը պայմանավորված է գրեթե միևնույն գործոններով (բարձր հավակնություններ, սոցիալական հմտությունների ու կարողությունների, ինքնավստահության ու ինքնահաստատման ցածր մակարդակ), ինչը հանգեցնում է բարձր կոնֆլիկտայնության: Միևնույն ժամանակ՝ դրանք պայմանավորված են դեռահասության տարիքին բնորոշ անցումային հոգեֆիզիոլոգիական առանձնահատկություններով, ծնող-երեխա փոխհարաբերությունների խաթարումով:

- Հետազոտության արդյունքների համաձայն մեր կողմից կիրառված հոգեվերականգնողական համակարգի նպատակաուղղված կիրառումը հնարավորություն է տալիս ապահովելու ագրեսիվության բարձր մակարդակ ունեցող դեռահասների վարքի կարգավորման գործընթացը, որն իր հերթին նպաստում է ճիշտ ինքնագնահատականի ձևավորմանը: Այն հնարավորություն է տալիս դեռահասներին օբյեկտիվորեն ընկալելու միջավայրի հարաբերությունները, ծնողների ու մանկավարժների՝ միջանձնային փոխհարաբերություններում գոյություն ունեցող սուբյեկտիվությունը, կյանքի իրական պատկերը:

Ատենախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հետևյալ գիտական հրատարակումներում.

1. Գևորգյան Ա.Կ., Ժամանակակից դեռահասների ագրեսիվ վարքի պատճառները և տիպաբանությունը, «Մխիթար Գոշ» գիտամեթոդական հանդես 1(25), 2010թ., էջ 65-67:
2. Գևորգյան Ա.Կ., Դեռահասների միջանձնային փոխհարաբերություններում դրսևորվող սոցիալական ընկալման յուրահատկությունները, «Կանթեղ» գիտական հոդվածների ժողովածու 1 (54), Երևան 2013թ., էջ 258-265:
3. Գևորգյան Ա.Կ., Ագրեսիայի դրսևորման առանձնահատկությունները դեռահասության տարիքում, «ՀՀ սոցիալ-տնտեսական կայուն զարգացման հիմնախնդիրները» գիտական հոդվածների ժողովածու 3 «19», Երևան 2013թ., էջ 167-171:
4. Գևորգյան Ա.Կ., Ագրեսիայի բարձր մակարդակ ունեցող 12-14 տարեկան դեռահասների սոցիալական ընկալման առանձնահատկությունները, «Հոգեկան առողջության հայկական հանդես», Հայկական հոգեբուժական ասոցիացիայի պաշտոնական պարբերական, Երևան, հատոր 4, թիվ 2.2013, էջ 49-53:
5. Մկրտումյան Մ., Գևորգյան Ա., Դեռահասի ինքնագնահատականի հիմնախնդրի դրվածքը ժամանակակից հոգեբանության մեջ, «Մանկավարժության և հոգեբանության հիմնահարցեր» միջբուհական կոնսորցիումի գիտական հանդես 3, Երևան 2013, էջ 100-107:

ГЕВОРГЯН АННА КОЛЯЕВНА

ОСОБЕННОСТИ СОЦИАЛЬНОГО ВОСПРИЯТИЯ 12-14- ЛЕТНИХ ПОДРОСТКОВ С ПОВЫШЕННЫМ УРОВНЕМ АГРЕССИИ

Автореферат диссертации на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.05 -<<Психология развития и образования (педагогическая, возрастная, специальная)>>.

Защита диссертации состоится 9-ого декабря 2014г. В 12.00 на заседании специализированного совета философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тигран Мец, 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования:

Здоровый образ жизни поколений, эффективная организация их психогигиены являетсядля возрастной психологии очень важной проблемой. Поэтому особенности проявления агрессии подростков в условиях социальной тревоги и кризиса, а также особенности восприятия существующих в социуме социальных отношений являются более, чем актуальными и важными проблемами исследования.

Цель исследования:

Изучить процесс социального восприятия12-14-летних подростков с повышенным уровнем агрессии, а также особенности изменения агрессивного поведения подростков в процессе проведения психологической корректирующей работы.

Задачи исследования:

1. Анализ профессиональной литературы по проблемам агрессии.
2. Выявление особенностей проявления агрессии 12-14-летних подростков, имеющихся в них психологических закономерностей, а также наблюдающихся в их поведении изменений.
3. Выявить характерные особенности агрессивного и нормативного поведения подростков, существующие социально-психологические закономерности новообразований и дать их сопоставительный анализ.
4. Посредством экспериментальных исследований выявить особенности социального восприятия подросткови лежащие в основе их трансформаций причинно-следственные связи.
5. Выявление социально-психологических детерминантов регулирования поведения подростков в процессе психокорректирующей работы по предотвращению агрессивного поведения, в целях повышения уровня самоидентификации, полноценности и самооценки.

Научная новизна иследования

Экспериментальным путем выявлены психологические особенности социального восприятия подростков 12-14 лет с повышенным

уровнем агрессии, живущих в условиях социальной тревоги, имеющиеся в них закономерности, появившиеся в результате этого характерные стороны поведенческих изменений. Обнаружены социально-психологические детерминанты агрессивности подростков 12-14 лет, живущих в трудных социально-экономических условиях, особенности их влияния, эффективные пути и средства регулирования и корригирования нежелательных поведенческих проявлений.

Теоретическая значимость исследования

состоит в том, что полученные результаты могут осветить неисследованные грани данной проблематики. Теоретические обоснования могут способствовать систематизации и дополнению современных концепций социального восприятия подростков, самооценки личности и трансформации поведения. Полученные в результате исследования новые научные данные и закономерности могут способствовать диагностике агрессивного поведения подростков, выявлению закономерностей процессов социального восприятия и признанию глубинных механизмов изменения системы ценностей.

Практическая значимость исследования

состоит в том, что на основании теоретических и практических обобщений, научно организованных практических действий реконструирована и переосмыслена полноценность воспитательных, реабилитирующих, а также корректирующих работ психологов и педагогов. Разработана эффективная система психологического сопровождения и осуществления контролирующих действий, что даст возможность специалистам более результативно осуществлять процессы социализации и адаптации подростков с повышенной степенью агрессии. Разработанная корректирующая система даст возможность при работе с такими детьми обеспечить и систематизировать процессы их социального восприятия, а также поможет построить эффективную стратегическую программу психологической поддержки.

Экспертиза и надежность данных исследования

Экспертиза исследования проводилась на кафедре теории и истории психологии Армянского государственного педагогического университета им.Х.Абовяна, в Ванадзорском государственном педагогическом институте им. Ов.Туманяна, в клубе психологов при БОО «Орран». Результаты исследования апробированы в аккредитованных ВАК-ом РА научных журналах и в сборниках трудов республиканских научных конференций. Надежность и обоснованность диссертации обеспечена комплексным подходом к предложенной проблематике, научной аргументированностью основных теоретико-методологических положений, научно обоснованной логикой композиционных (структурных) составляющих, применением соответствующих целям и задачам методов. Решение предложенных задач обеспечено эффективным комплексом методов математической статистики и психологических исследований.

Объем и структура диссертации

Диссертация состоит из вступления, трех глав, методических рекомендаций, общих выводов, списка использованной литературы и приложений. Общий объем составляет 142 страницы.

GEVORGYAN ANNA

FEATURES OF SOCIAL COGNITION IN 12-14-YEAR-OLD CHILDREN WITH HIGH LEVELS OF AGRESSION

Thesis for gegree of candidate of psychologiacal sciences, in the area of specilization 19.00.05 “Developmental and Educational Psychology (pedagogical, age, special)”.

The defense of thesis will be hold on December the 9-th of 2014 at 12.00 at the session of Special Board of philisophy and psychology 064 HAC awarding degrees ander the Armenian State Pedagogical University after K.H. Abovyan, adress: 17 Tigran Mets, Yerevan, 0010

SUMMARY

Actuality of the Study

Healthy living generations, effective organization of mental health is a very important problem for psychology. Therefore, particularly aggression in adolescents with social anxiety and crisis, and especially the perception of existing social relations in society are more than relevant and important research issues.

The Objective of the Research

The aim of the dissertation is to study the process of social perception of 12-14-year-olds with high levels of aggression, as well as changes in features of aggressive behavior of adolescents in the process of correcting the psychological work. We particularly targeted at:

1. Analysis of the professional literature on aggression.
2. Identification of the features of aggression in 12-14-year-olds, available in their psychological patterns and the monitoring of changes in their behavior.
3. Identification of the characteristics of aggressive and normative behaviour of adolescents, the existing social and psychological patterns of tumors and to give them a comparative analysis.
4. Revelation of features of the social perception of adolescents and their underlying transformation cause by means of experimental studies.
5. Identification of the socio-psychological determinants regulating the behaviour of adolescents during work on prevention of aggressive behaviour, in order to improve the self-identity, self-esteem and usefulness.

The Scientific Novelty of the Study

Via experiment we revealed the psychological characteristics of social perception of adolescents 12-14 years with increased aggression, living in social anxiety. They are available in patterns that emerged as a result of this characteristic

aspects of behavioral change. We also discovered social and psychological determinants of aggressive adolescents 12-14 years old, living in difficult social and economic conditions, especially their impact, effective ways and means of regulation and masking unwanted behavioral manifestations.

The Theoretical Value of the Study

The theoretical value of the study lies in the fact that the results can illuminate unexplored facets of this problem. Theoretical study may contribute to systematizing and complementing the modern concepts of social perception of adolescents, self-identity and transformation behaviour. The results of the research and new scientific data may contribute to the diagnosis of aggressive behaviour of adolescents identifying regularities of social perception and recognition mechanisms underlying changes in the value system.

The Practical Value of the research

The practical value of the dissertation consists in the fact the theoretical and practical generalizations, scientifically organized practical actions can promote rethinking the usefulness of educational, rehabilitative, and corrective work of psychologists and educators. An effective system of psychological support and implementation of regulatory actions that will allow professionals more effectively carry out the processes of socialization and adaptation of adolescents with a higher degree of aggression. The developed system will enable correction when working with these children and provide a systematic process of social perception, and help build an effective strategic program of psychological support.

Expertise and Reliability Studies

Examination of the research conducted at the Chair of Theory and History of Psychology at Armenian State Pedagogical University after H.Abovyan and in Vanadzor State Pedagogical Institute after Hovh. Tumanyan, with psychologists at the club at the NGO "Orran". Results of the study were tested in RA scientific journals and collections of works of national scientific conferences accredited by RA Higher Assessment Committee.

Reliability and validity of the dissertation of a comprehensive approach to the proposed issues, scientific argumentation basic theoretical and methodological provision of evidence-based logic of composite (structural) components, using appropriate methods of goals and objectives. Reliability of the study also confirmed scientifically verified findings and reasoning important ideas domestic and foreign psychologists. The solution proposed to ensure efficient complex of methods of mathematical statistics and psychological research.

Volume and Structure of the Dissertation

The thesis consists of an introduction, three chapters, guidelines, general conclusions, bibliography and appendices. The total volume is 142 pages.